Ընդունելություն Մայր Աթոռում

Մայիսի 23-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոսը Մայր Աթոռ ս. Էջմիածնում ընդունեց Մոսկվայի «Իմպերիալ» ֆիրմայի եւ ռուս-հայկական նախաձեռնությունների կենտրոնի տրեզիդենտ Արկադի Վարդանյանին: Պրն. Վարդանյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց կենտրոնի գործունեությունը, ինչպես նաեւ իրենց պատրաստակամությունը հայտնեց հայ-ռուսական հարաբերությունների սերտացմանը նպաստելու գործին: Կենտրոնի միջոցներով հանրապետության սոցիալապես անապահով 400 ուսանողների (այդ թվում նաեւ Ղարաբաղից) տրվում է կրթաթոշակ: Այն զորավիգ է կանգնում նաեւ այն օդաչուների ընտանիքներին, որոնք զոհվել են Ղարաբաղում: Սերտ կապ կա նաեւ Արցախի թեմի հետ: Կենտրոնն աջակցում է Մոսկվայում ժամանակավորապես բնակվող մեր հայրենակիցներին. կազմակերպվում են դպրոցներ, իրականացվում է վիրավոր ազատամարտիկների բուժում: Կենտրոնի միջոցներով է տպագրվում նաեւ «Արմյանսկի վեստնիկ» թերթը:

Վեհափառ Հայրապետը գնահատանքի խոսք ասաց ռուս-հայկական նախաձեռնությունների կենտրոնի գործունեության վերաբերյալ եւ շնորհակալություն հայտնեց հյուրերին ազգանպաստ ձեռնարկումների համար:

-Այս պետությունը դարձած է հայ ժողովրդի կամքը արտահայտող պետություն,-ասաց նա: - Ոչ ոք մեզ արժեք չի տա, եթե մենք մեզ չարժեվորենք: Այս տունը մեր տունն է եւ հայկական յուրաքանչյուր կազմակերպություն պետք է նպաստի մեր հայրենիքի եւ պետության զորացմանը:

Վեհափառ Հայրապետը ներկայացրեց իր տպավորությունները Արցախ կատարած այցելությունից՝ շեշտելով, որ պետք է բաջալերել հայերի վերադարձը հայրենիք, որի դեպքում մեր ձայնը առավել կզորանա: Զրույցի ընթացքում շոշափվեցին նաեւ տնտեսական նախաձեռնություններին եւ Հայաստանի Հանրապետության բաղաքացիությանը վերաբերող հարցեր: Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ իր առաջին հայրապետական այցելությունը Հայաստանից դուրս կլինի Մոսկվա:

Վերջում Վեհափառ Հայրապետին ընծայվեց Ռուդոլֆ Խաչատրյանի արժեքավոր կտավներից մեկը, որը պատկերում էր Կոմիտաս Վարդապետին:

Մայր Աթոռ ս.Էջմիածնի մամլո դիվան



Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/publications/Pub-0202?lang=en

Rudolf Khachatryan (1937–2007)

Rudolf Khachatryan Digital Archive · rudolfart.com

Reception in Etchmiadzin. Arkady Vardanyan's Gift of Komitas to Catholicos Garegin

This file was downloaded from:
https://rudolfart.com/publications/Pub-0202?lang=en

Works by Rudolf Khachatryan © Heirs of Rudolf Khachatryan. Other texts, photographs and design © their respective authors. When using this material, please credit the source and link to the page above.

Рудольф Хачатрян (1937–2007)

Цифровой архив Рудольфа Хачатряна · rudolfart.com

Прием в Эчмиадзине. Дар Аркадия Варданяна «Комитаса» каталикосу Гарегину

Файл скачан со страницы:
https://rudolfart.com/publications/Pub-0202?lang=ru

Произведения Рудольфа Хачатряна © наследники Рудольфа Хачатряна. Остальные тексты, фотографии и оформление © их авторы. При использовании материала укажите источник и ссылку на эту страницу.